

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ

Երկու քիւր մեկ ծրարով

Տարեկան 14 Ֆր.

Վեցամսեայ 7 Ֆր.


ԱՍԵՐԻԱ

Տարեկան 2 60 Տօլ.

Վեցամսեայ 1.50 Տօլ.

ԿԱԼԻԻԿ

ԾԱՆՈՒՅՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵԹ.



Լ Ր Ա Կ Ի

Ա Ջ Կ Ա Յ Ի Ն Ե Ր Կ Ա Ն Ք

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՍՍԵՆ ՉՈՐԵՔԵՆԻԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Ց Է

Redaction du Journal

«Ira vounk»

(Bulgarie) VARNA

Редакция

на ВѢСТНИКЪ

«Иразункъ»

ВАРНА

Գրութիւնք եւ տպութիւնք

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Նորին Արքայական բարձրութեան Իշխանին սիրեցեալ ժոր Գլխաւորին Իշխանուհւոյն մահուան առթիւ, յառաջիկայ կիրակի 11 Փետրուար Սրբ. եկեղեցւոյս մէջ Ս. անմահ պատարագ եւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ժամը 10 կէսին:

Թաղ. Խորհուրդս այսու կը հրաւիրէ Վառնայի արգոյ հայ հասարակութիւնը ներկայ գտնուիլ իւր եկեղեցի, իւր վերջին յարգանքները մատուցանելու յաւատարմութեամբ իշխանուհւոյն յիշատակին:

Թաղ. Խորհուրդ Ս. Սարգիս եկեղեցւոյ Վառնայի

ՊՈՒԼԿԱՐԱՅՈՑ ԱՌԱՋԱՆՈՐԴԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Շուրջայէն մեզ շրջապատող նախնային մեր կը տեղեկանանք թէ այդ քաղաքի աղգայինք իրար կանցնին այս օրեր առաջնորդական խնդրոյն առթիւ: Տեղւոյն հոգաբարձութիւնը հրաւիր կը ցրուէ, միթիւն կը դուռնաւորի, որոշումներ կը տրուին և յանձնախումբ կը կազմուի. գիտէ՞ք ինչ բանի համար. — Պուլկարահայ թեմը ուղղակի Կաթողիկոսին հովանաւորութեան տակ մտնէ, թէ Կ. Պօլսոյ պատրիարքարանի անօրինութեան ենթակայ մնայ:

Ըստ մեզ այս հարցը լուծուած է արդէն և անոր պատմութիւնը շատ կարճ:

Թուրք կառավարութեան ճնշմամբ պիկարութեան մատնուած Պատրիարքարանէն յուսահատ, առաջին անգամ Իրաւունքը առաջարկեց ուղղակի Կաթողիկոսին հովանաւորութիւնը խնդրել և անձնապէս ալ գործնական քայլը առաւ միթիւնով մը, որուն հետեւանքը եղաւ պուլկարահայութեան ամբողջ տասը քաղաքներէ իրաւասութիւն տրուելը Վառնայի Թաղ. Խորհուրդին որ Կաթողիկոսին դիմէ եւ առաջնորդի մը ընտրութեան և

առաքման համար հովանաւորութիւնը խնդրէ:

Վեհ. Կաթողիկոսը մեր այդ դիմումին վրայ Տ. Տաճատ վարդապետը նուիրող շրջեց Պուլկարահայոց առաջնորդական ընտրութիւնը կատարել տալու համար. ոչ թէ ինքզինքը ընտրել տալ ջանալու:

Միզ կը թուի թէ Շուրջայի այսօրուան յուզումը այս կէտը լաւ չը հասկնալէ առաջ եկած է: Կուսակցութեան մը մարդիկ կը փափաքին որ իրենց փարախին պատկանող Տ. Տաճատ վարդապետը Պուլկարիա մնայ և առաջնորդ ընտրուի. մինչդեռ տարբեր կուսակցութիւններ եւ ժողովուրդի հսկայ մէկ մեծամասնութիւնը չեն հանդուրժեր որ կուսակցական վարդապետ մը իրենց առաջնորդ ունենան, և ասոնց մէկ մասը լաւ կը համարէ Պօլսոյ Պատրիարքարանին ապիկարութեանը ենթակայ մնալ, քան թէ կուսակցական վարդապետ մը ունենալ իր գլխուն վրայ:

Շուրջայիք՝ որ երկու կուսակցութիւններու բաժնուած են պատմական թուականներէ ի վեր, պէտք չէ որ այսօր պատըռուուն այդ խնդրոյն համար: Կուսակցական առաջնորդ մը չուզողները մենք կրնանք մասամբ ապահովել թէ Տ. Տաճատ վարդապետ պուլկարահայոց առաջնորդ չըլլար ու չը մնար սա պատճառներով:

Նախ՝ թէ Հայրիկը զանի շրջակայէն առաջնորդական ընտրութիւնը կատարելուն պէս եւրոպական անցնելու համար:

Երկրորդ՝ Տ. Տաճատ վարդապետ կը կարծենք թէ, ինքն ալ չուզեր որ իր ընտրութեամբը կուսակցական կիրքերը գերադրուէին պատճառ դառնայ. ուստի իր փարախին մարդոցը կը պատուիրէ որ զինք չքանտրուի չընեն:

Երրորդ՝ ընտրութեան ձեռնարկուելէ առաջ Վեհ. Կաթողիկոսէն պիտի խնդրենք ընտրելու ցանկ մը, որուն մէջ ոչ Հնչակեան և ոչ Դաշնակցական

կղերի անուն գտնուի:

Եւ ասոնցմէ զատ կան պատճառներ որոնք անկարելի կրնեն Տաճատ վարդապետի առաջնորդութիւնը: Այդ պատճառները մենք աւելորդ կը նկատենք հոս յիշել:

Ուստի Շուրջայիք պէտք չէ յուզուին, և հաստատ մնալու են առջի որոշման վրայ, ապահով ըլլալով թէ կուսակցամոլ մէկը իրենց առաջնորդ չեն ունենար և մամուլը հսկող է այս մասին:

ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պօլիս, 20 Յունվար

Շուրջ չորս շաբաթ եղաւ որ Պուլկարական էքզարքարանը Դըրան ներկայացուց մանրամասնութիւն պարունակող թագրի մը, բողոքելով յոյն կղերին հալածանքներուն և յոյն հրոսակախումբներուն չարագործութեանց դէմ, նաեւ տեղական կառավարութեանց կարգ մը գործակալներու դէմ, որոնք խօսք մէկ ըրած են հէլլենական բրոքականտիսթներուն հետ պուլկար տարրը ճզմելու համար:

Անցեալ շաբաթ օրուան Սինօթի գումարումին մէջ, որոշուեցաւ բացարձակ հերքում մը հրատարակել էքզարքի բողոքներուն մասին:

Բայց միւս կողմի հիւպատոսական տեղեկագիրները կը հաստատեն թէ կացութիւնը այն է որ պուլկար եկեղեցին կը հալածուի:

Դուռը կը մերժէ ճանչնալ Թուրքիոյ մէջ հաստատեալ շատ մը Ամերիկեան վարժարանները: Ամերիկայի Միացեալ Նահանգաց զեապանատունը կը պատրաստուի խիստ ազգու դիմում մը ընելու: Անհաւանական չէ որ, նախընթացներու նման, նաւային ցոյցի մը դիմէ, Դուռը հարկադրելու համար որ տեղի տար Սալայի Թուրք կառավարութիւնը:

ինչ որ ալ ըլլան իր խոստումները խնդրոյ տակ եղած վարժարանները ճանչնալու մասին, պարտաւոր է իր նրկրին մէջ ապահովելու անգործութիւնը եւ երկար քննութիւն մը բանար բայց շատ ժամանակ կը պահանջէ մի առ մի քննել և հաստատել թէ իրմէ պահանջուած համաձայնութիւնը թուրքիոյ շահերը վտանգելու բնոյթը չունի: Իրօք պէտք չէ մոռնալ թէ ըմբոստ գաղափարները, մանաւանդ հայ երիտասարդութեան մէջ, կուգան այն գաստիարակութենէն որ կը տրուի Անատոլիոյ մէջ խնդրոյ տակ եղած այդ հաստատութիւններէն:

Գերմանիոյ դեսպան Պաուս Մարչալի բողոքներուն շնորհիւ մայրաքաղաքի բնակչութիւնը — ինչպէս որ կը լսեմ օսմանցիներու խօսիլը — կը սկսի շունչ առնել և ինքզինք ազատած զգալ այն երկիւղէն զոր աղգած էր Սուլթանին թիկնապաճ ֆէհիմ փաշան: Ասիկա յանցաւոր է երկու հարիւրէ աւելի չարագործութիւններով, անպատկառ վարժուողով, մահուան սպառնալիքներով, դրամի յափշտակութիւններով, առեւանգութիւններով, զինեալ գողութիւններով, ուրիշներու սեփականութիւններու գրաւումներով եւայլն եւայլն:

Սուլթանը՝ որմէ զինք շրջապատողները կը պահէին անոր թիկնապաշին ոճիրները, Դր երախտագիտութիւնը յայտնեց պարոն Մառչալի այդ մասին զինք լուսաւորած ըլլալուն համար:

Ամենախիստ քննութիւն հրամայուած է Սուլթանին կողմէ, քննութեան մինչև լմնալը ֆէհիմ գողուած կը մնայ իր տանը մէջ, որ ոստիկաններու շրջապատուած է:

«ԷՆՏԷՆ. ՌՈՒՄԷՆ



ԹՈՒՐԻՔԻԱ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻԱ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐ

Իրաւունքի թիւ 7, 8 և 9ի միջոցաւ ծանօթացուցինք մեր ընթերցողներուն դաշնագրին տյն տասը ցուցակները, որոնց համաձայն պիտի կատարուին մաքսատանց գործողութիւնները մաքսի, աքսիզի եւ օքթուալի մասին:

Այդ ցուցակներուն ծանօթանալէն յետոյ հարկ է որ բուն դաշնագրին ընդհանուր տրամադրութիւններուն ալ ծանօթանան մեր ընթերցողները ահա ատենք ալ:

Օսմանեան այն արտադրութիւնները եւ բերքերը, որոնք նշանակուած են համաձայնութեան կցուած 1 ու 2 թիւ ցուցակներուն մէջ առանց մաքսի պիտի մտնեն Պուլկարիա: Նոյնը պիտի ըլլայ նաեւ թիւ 3 ու 4 ցուցակներուն մէջ նշանակուած պուլկարական բերքերուն եւ արտադրութեանց համար երբ 4 Պոլսի եւ Թուրքիոյ նահանգները մտցուին: Թիւ 5, 6, 7, 8, 9 ու 10 ցուցակներուն մէջ նշանակուած օսմ. եւ պուլկարական բերքերը ու արտադրութիւնները երբ արտածող երկիրը ներածուին վերոգրեալ ցուցակներուն տրամադրած մաքսին, «աքսիս»ին եւ «օքթուալ»ին ենթակայ պիտի ըլլան: Ատենք նաեւ պիտի օգտուին ուրիշ երկիրներու արտադրութեանց համար եղած ու ըլլալիք մաքսի զեղչերէն: Վերոգրեալ ցուցակներուն մէջ նշանակուած ապրանքները երբ երկու կողմի երկիրները մտնեն, աւելնէ աւելի նպաստաւորեալ օտար աեղի մը համար սահմանուած մաքսին ենթակայ պիտի ըլլան, սակայն երկու կողմերը իրաւունք ունին վերոգրեալ ցուցակներուն մէջ յաւելումներ ընելու, չնշանակուած հողային բերքերու եւ առեւտրական արտադրութեանց վաճառականութեան գիւրու թիւն ընծայելու նպատակով: Այդ ծիսախոտ, ալքոլ, դարեջուր եւ ամէն տեսակ ոգեւորից ըմպելիներ ներկայ գրութեան եւ կամ ուրկէ որ ալ արտածուած ըլլայ, նման ապրանքներու յատուկ գրութեանց պիտի ենթարկուին: Երկու կող-

մի երկիրներէն մէկէն միւսը փոխադրուած եւ կամ ապրանքը տրուելէ ետքը վերադարձուած եւ ապրանքներու փոխադրութեան յատուկ պարկեր, մեծ ու փոքր տակաւներ, շիշեր եւ ամէն տեսակ ամաններ, ծածկոցներ եւ այլն մաքսէ զերծ ըլլալով պիտի ընդունուին: Օսմ. արտադրութեանց ու բերքերու վերաբերեալ ապրանքներ Պուլկարիոյ մէջ «թրանսիթ»ի տուրքէն զերծ են, որով պուլկարական ապրանքներն ալ նոյն թուրքականութիւնը պիտի վայելն օսմ. երկիրներուն մէջ: Երկու կողմի արտադրութիւններն ու բերքերը երբ ցամաքի կամ ծովի ճամբով մէկ նաւահանգիստէն միւսը փոխադրուին, ամենէն նպաստաւորեալ երկրին տրամադրութեանց պիտի ենթարկուին, եւ ոչ բնաւ աւելի: Ամէն տեսակ ապրանքներ, ինչպէս նաեւ անասնոց՝ անոնց արտադրութեանց փոխադրութեան, «թրանսիթ»ին վերադարձուելու, մթերանոց դրուելուն, քիմիական տարրալուծմանց եւ ցամաքի ու ծովի ճամբով կատարուելիք մաքսային ամէն տեսակ գործառնութեանց համար փոխադարձաբար պիտի ենթարկուին աւելնէ նպաստաւորեալ երկրի տրամադրութեանց:

Երկու կողմը իրենց սահմանադրութիւն վրայ պիտի արգիլեն մաքսանենդութեան միջնորդներու հաստատումը նաեւ հաւաքարար պիտի արգիլեն մաքսանենդութեան միջոցաւ ապրանքներու մուտքը, եւ հեղինակները պիտի պատժեն: Այդ առթիւ երկու կողմի պաշտօնեաները իրարու պիտի ողնեն միանգամայն ամէն տեղեկութիւն պիտի հաղորդեն պատկանեալ պաշտօնեաներուն: Վաճառականներու գործարանի տէրերու, արհեստաւորներու եւ կամ անոնց ներկայացուցիչներուն կողմէ իրեն նմոյշ ներածուած եւ եւ մաքսի ենթակայ առարկաները առանց մաքսի պիտի ընդունուին, սակայն արտածողները արտածող երկրին մէջ սահմանուած օրինական երաշխաւորութիւնը պէտք է ընծայեն: Այդ առարկաները եթէ չը ծախուին, պէտք է մինչեւ վեց ամիս վերադարձուին: Նաեւ առանց տարակոյսի պէտք է հաստատուի որ նախապէս ներածուած առարկաներն են:

Պուլկարիոյ իշխանապետութիւնը «աքսիս»ի տուրքը պիտի չգանձէ օսմ. ներածութիւններէն: Թարմ ու չոր պտուղներէ, մեղրամոմէ, «թահան»է, խոզկարկէն, սուսամէ, ատաղձէ, կողովի եւ տակաւի մէջ գրուած ձիթա-

պտուղէ, կաշիէ պարզ օճառէ, զլիսու կապուելիք «եազմա»ներէ, թարմ, չոր ու աղած ձուկներէ, թարմ ու չոր ամեն տեսակ բանջարեղէններէ եւ կանեփէ բամպակէ, բուրգէ, ու մետաքսէ շինուած կերպասներէ: Պուլկարիոյ մէջ 9 թիւ ցուցակին տրամադրած մաքսերուն պիտի ենթարկուին օսմ. հետեւեալ ապրանքները. — Անուշեղէն, չաքարեղէն, չաքարեղէնով պատրաստուած պտուղներ, ամեն տեսակ «լոքու»ներ, «բէքմէզ հեղվար», «գող հեղվար», «նուկա» եւ ամեն տեսակ «հէլվա»ներ: Իսկ բուսական ամեն տեսակ իւղեր եւ չամիչներ 10 թիւ ցուցակին տրամադրած մաքսին ենթակայ պիտի ըլլան: Պուլկարիոյ արտադրութիւններէն թարմ ձուկները 4, Պոլսոյ ու Թուրքիոյ նահանգներուն մէջ «միթի» տուրքին ենթակայ պիտի ըլլան: Օսմ. արտադրութիւններէն թարմ ձուկներն ալ համանման տուրքի մը ենթակայ պիտի ըլլան: Պուլկարիոյ մէջ, Օսմ. արտադրութիւնները եւ բերքերը, բացի տեղական տուրքերէն, «օքթուալ»ի եւ ուրիշ այդ կարգի տուրքերու ենթակայ պիտի ըլլան: Պուլկարիոյ մէջ, փոխադարձաբար նոյնը պիտի ըլլայ նաեւ Պուլկարիոյ ապրանքներուն համար օսմ. երկիրներուն մէջ: Երկու կողմը կը խոստանան ապրանքներու համար նոր տուրք չը հաստատել եւ եղածն ալ չաւելցնել: Նաեւ յառաջիկային ներքին տուրքերը չնջել կամ զիջել: Եթէ հարկ ըլլայ ատկէ երկու կողմն ալ փոխադարձաբար պիտի օգտուին: Երկու կողմը կը խոստանան փոխադարձ վաճառականութեան արգելք չըլլալ: Ներածուած կամ «թրանսիթ»ի մասին: Այդ մասին բացառութիւն կը կազմեն Ա. Տէրութեան վերաբերեալ եւ հիմա գործադրուող կամ տպագրային հաստատուելիք մենավաճառները: Բազմական իրեղէնները, հանրային ապահովութիւնը: Գ. հանրային առողջապահութիւնը, տարափոխիկ հիւանդութիւնները եւ վնասակար միջատներու դէմ օգտակար տունկերու պաշտպանութիւնը եւ Գ. անասնոց առողջապահութեան ու հրակողութեան վերաբերեալ խնդիրները: Երկու կողմի միջոցաւ կատարուելիք փոխադրութեանց յատուկ մաքսային գործողութեանց առանց վնասելու, սակեւոր ուրուած է որ երկու կողմի երկիրներէն մէկին մէջ երաշխաւորագրի ցոյց տալու ենթակայ եւ այդ կամ ուրու պատճառով հոն արգէն կնքոյ

տակ առնուած ապրանքները միւս կողմի երկրին մէջ բնաւ պիտի չբացուին: Բնաւ չբացուած ու անեղծ մնացած կնիքը կամ կապարները եթէ «գոնթուր»ի գործողութեանց ենթարկուած են, պիտի չփոխուին: Երկու երկիրներուն մէջ մաքսային գործառնութիւնները կարելի եղածին չափ պիտի պարզուին եւ գիւրու թեւաբ ու փութով պիտի կատարուին:

(Շարունակելի)

ՎԱՌՆԱՅԻ ԱՂՔԱՏԱԽՆԱՄԸ

Գործադիր Ժողովու շնորհակալութեամբ ստացած է Յուն վար 8 էն մինչեւ 21 (թուական իւր հրաճարականին) հետեւեալ նուիրատուութիւնները:	
Տ. Կաշիկ Տամատեանէ	60 ֆր.
» Ասատուր Փափազեանէ	5 »
«Արաք» Նսւազախուժէն ձեռամբ Տ. Օննիկ Բարսեղեանի	48 ֆր.
Գէորգ Խանձեանի եւ Սահակ Աւետիսեանի ձեռամբ չըջագայած գանձա նակէ	67.75 »
Գուժար	180.75

Նոյնպէս շնորհակալութեամբ ստացած ենք նուէր Տ. Մկրտիչ Արապեանէ: 21 կտուր պտրխէա աղքատ աշակերտուհիներու բաժնելու համար:

Այս առթիւ Գործ. Ժողովու պարտք կը համարէ յանուն աղքատաց իւր խորին շնորհակալութիւնները յայտնել քաղաքային յարգոյ հայ հասարակութեան որու ընձեռած աջակցութեան շնորհիւ կրցաւ իւր պաշտօնավարութեան միջոցին կարելի եղածին չափ նպաստել բազմաթիւ աղքատ եւ հիւանդ քնտանիքներու:

Գործադիր Ժողովու իր յաջորդին պատրաստ է յանձնել իր պահեստի իւր թովը ունեցած 613 ֆր. 72 սնդ գումարը:

Ի դիմաց հրաժարեալ Գործ. Ժող. Ատենապարի Ատենապետ ՕՆՆԻԿ ԱԴԱՄԵԱՆ ԳՐ. ՍԻՄՈՆԵԱՆ

ՄԵՐ ՆՈՐ ԳՈՐԾԱԿԱԼԸ

Պալլըզի և շրջակայ գիւղերուն համար լիբաւուքի գործակալութիւնը ստանձնած է Տ. ՕՆՆԻԿ ՕՂԱՆԵԱՆ ի Պալլըզի:

Այդ կողմերու մեր յարգոյ բաժանորդները թող հաճին իրենց բաժնեգրիները վճարել յիշեալին:

տակալ թողնելով ձեզ: Զշմարտէք ըսելով, շատոնց է որ մտադիր էի խօստովանել, սակայն չէի համարձակել... որովհետեւ յայտնութիւնս՝ կենաց եւ մահու խնդիր մըն է:


Ու լոնց... Յետոյ մեքենաբար ոտքի ելու, նայուածքդ դէպի դուռն յանց, ականջ դրու ու շարունակեց:

— Ինչպէս գիտէք, այդ մանկամարդ աղջկը հայուհի մըն է եւ կոտորածի սեւ օրերէն ետքը բռնութեամբ հոստեղ բերուած է՝ լիկուելու ու դազանական կիրքի մը գոյացում տալու համար: Տեսա՞ք այդ, աչքովնիք տեսա՞ք իր ցնորական վայրկեանը, իր տառապանքը իր արցունքները ու իր անէճքները... Դիմացէք իր թշուառութեանը վրայ ու, միեւնոյն ատեն, գթալ տուի՞ք ինծի... Զեր գորովը սիրտս լեցուց... ու այն օրէն հետաքրքիր եղայ իմանալու թէ ինչ հոգեկան դառնութիւն էր իր կեանքը մթաքնող... Երբ ես հետամուտ էի իր աղէտաւոր թշուաթիւնը թափանցելու, ան յաջողեցաւ

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

ԱԻՍԶԱԿԱՊԵՏԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ



ԱՐԵՅԸ

(Շար. նախորդ թիւէն)

Նուրիմէ չէր պատասխաներ... աւելի ճիշտ ըսելով՝ չէր կրնար պատասխանել: Կըզգար թէ հոգեկան անհուն գորով մը կը լեցունէր իր էութիւնը: Կը զգար թէ բարեբար հրեշտակ մը կար իր դէմը, որուն աւելի մէկ արտայայտութիւն, ամեն մէկ երեւոյթ կը ճառագայթէր իր մէջ... մէկ խօսքով կը զգար թէ մամնացած երանութիւն մը կը տեսնէր, որմէ

թափանձած անուշ խանդաղատանքէն կը համակրուէր:

— Խօսէ, աղջիկ՝ կս, վրայ բերաւ Աւազակապետը Գիտնալու ես որ երջանիկ մէկը լուկեաց չըլլար: Յուստ պէյ քի մը առաջ ըսաւ թէ թուրքի մը կը նմանիս եղեր այս զեղեցիկ ու հոյակապ ապարանքին մէջ... անա՛նկ որ Մէլինէ անգամ կը նախանձի քու զուարթութեանդ ու ասանկ յանկարծական փոփոխութեանդ վրայ:

— Իրաւ է, ո՛հ իրաւ է. չափ փոխուած եմ, չափ խօսկալի մէկը դարձան եմ, թոթովեց նուրիմէ՝ իր աղւոր ու հմայիկ աջքերու մէջ անուշ ճառագայթ մը ցոլացնելով: Ուսկի՞ց է այս փոփոխութիւնս, ուսկի՞ց է այս երանութիւնս... ատիկա Աստուած գիտէ: Ախ, Բարի Ֆաքիր, ալ յուսահատական խօսքեր չպիտի ընեմ: Բոլոր կեանքս Աստուծոյ գթութեան կը յանձնեմ... միայն թէ պարտականութիւնս է աղօթել, մի՛շտ աղօթել:

— Աղօթե՛լ ըսիր... ո՛հ, ատիկա ա-

ղէկ: Ազօթքը մարդու հոգիէն ցոլացած բարութիւնն է, աղջիկ՝ կս՝ երբ տառապանքի ժամերուդ մէջ ծունկի եկած աղօթես, կը զգաս թէ անուշ ու թոթուած բան մը, որ շուշնի կը նմանի, նոյն պահուն էութեանդ կանցնի... Աղօթէ՛, միշտ աղօթէ՛... Ու հաւատա՛ որ Աստուած քու ձայնդ կը լսէ:

Այսպէս, Աւազակապետը հօր մը խանդաղատանքով մը խօսեցաւ, յետոյ Յուստ պէյին հետ առանձին սենեակ մը գնաց, որ հարեմանոցի միջանցքներէն բաւական անջատուած շէնք մըն էր:

— Ո՛վ Ֆաքիր, կը հաւատամ թէ Աստուծոյ մարդն էք դուք, զողողաց Յուստ պէյ երկրեղալի ձայնով մը. հետեւաբար կը հաւատամ թէ նենգութեան ու վատութեան զիմակով չէ որ այս սեմերէն ներս կը մտնէք: Ախ, մտիկ ըրէ՛ք... այս պահուս խորհրդաւոր գաղտնիք մը պիտի յայտնեմ ձեզի Աստուծոյ ու ձեր խղճին հանգչեալ պար:

ՄԱՇԹՈՅ Զ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՆԴԻՐԸ

✠ ✠ ✠

Մաշթոյ չվարդապետի եղբոր կինը Լուսիա Ամերիկայէն, իսկ ասոր ամուսինը Պուլկարիոյ Սթ. Զաւորա քաղաքէն նոր նամակներ գրած են խմբագրութեան հրատարակելու խնդրանքով: Մենք անհատական մանաւանդ ընտանեկան խնդիրներով զբաղիլ բընաւ չենք սիրեր, բայց խնդիրը հանրային անձի մը, վարդապետի մը մասին ըլլալուն համար, անգամ կը մեր լրատուին քանի մը տողը քանի որ հրատարակեցինք, այլևս մենք մեզ պարտաւոր կը զգանք այդ խնդիրը պարզող շոշափելի փաստերուն միայն մաս մը տեղ տալ քոնէ մեր սրտնակներուն մէջ:

Աւելորդ է ըսել թէ կինը իր նամակով ամուսինը կանուանարկէ ի նպաստ իրեն ու չվարդապետին, ամուսինն ալ կինը և չվարդապետը կամքատանէ մանաւանդ չվարդապետը որ Ամերիկայէն վերադարձին իր եղբորը Վառնա մեկնելէն օգտուելով՝ անոր Ռուսլուքի տանը մէջ հիւր եղած ու եղբոր կինը գլխէ հանած է եղբոր ըստ կնոյ խոստովանութեան և տանտէր խրատաֆորովի սա գրաւոր վկայութեան:

«Որ մը գնացի լուսանկարչատունդ չէնք դիտելու (միտք ունենալով իր առնելիքին փոխարէն ընդունելու) հանդիպեցայ հետեւեալ արտաքոյ կարգի դէպքին, որը ծանր եկաւ ինձ նայելու մէջ եղբայր համբուրէ իւր եղբոր կնոյ և ապա պառկեցնէ գետին... այս բանիս համար երբէք եղբորդ հետ չը տեսնուեցայ, որովհետեւ նորան չապկընկերի կարգը դասեցի: Թէ և ես ալ խելօքներից չեմ, բայց դա վարդապետ է, հէջ օրը մը...»

Իմ անցեալ պատմութիւնս քրքրելու ես որ ուխտած էի գերեզմանէս անգին ալ մէկու մը չը յայտնել քաջաներս, չը գիտեմ ինչ ժողովան գաղտնիք մը կար իր բացատրութեանց մէջ որ ըստիպուեցայ ամեն բան խոստովանիլ... Ան տանն նուրիմէ համարձակութիւն ունեցաւ ըսելու. «Բարութիւն մը չէ՛ անպատուութեան մէջ ինկած աղջիկ մը ազատել, որուն համար աշխարհքը մոթ ու կեանքը դառն պիտի ըլլայ... այլ բարութիւնն այն է որ, խղճի ճշմարիտ գիտակցութեամբ, անոր անպատուութիւնը արիւնով կը մաքրես...» Ու հասկցայ թէ նուրիմէ աւելի նախտմեծար կը համարէր այս ապարանքին մէջ յոշոտուել, քան երբէք իր վրէժը չը լուծաց. — այսինքն իր անպատուութիւնն արիւնով չը մաքրած. — դուրս ելնելու փոք տեղ չաւանգի համողել զինքը... փոք տեղ իր ազատութեան համար ամեն տեսակ խօսքեր ըրի ու անձնութեան խօստացայ Ամենեւին, անկա ան-

Չվարդապետին եղբայրը կը յայտարարէ թէ պատրաստ է այս տողերուն բնագիրը կամեցողներուն ցոյց տալ նաեւ կը խոստանայ ի հարկին խմբագրութեանը զրկել կնոյ մէկ նամակին լուսանկարը, որմէ կը քաղենք հետեւեալ տողերը:

«Կը գրես որ մեզսակից յիշատակները (չվարդապետին զբոլած ընծաները) ջնջեմ: Եիշատակները մեղաւոր չեն. սիրտս է մեղաւոր, որը պիտի փոխեմ և ես այժմ դորա համար կաշխարհիմ էլ այսուհետեւ ինձ համար նշանակութիւն չունին ոչ եղբայրդ և ոչ էլ օտարներ, ամէնի վրայ էլ անտարբերաչքով պիտի նայիմ: Այս ըսած եմ ու դարձեալ կըսեմ, որ էլ այսուհետեւ չեմ ուզեր անպատու կին համարուիլ և խղճս ազատ ու մաքուր պիտի պահեմ թէ Աստուծոյ և թէ քո առաջ...»

Ռուսլուքի երկու հայ քահանաներուն և երկու պատուելիներուն քննութեան արդիւնքը եղող թուղթին լուսանկարեալ օրինակէն մենք կը քաղենք յետագայ տողերը:

«Բայց իր կինը Լուսիա ոչ միայն ըսած է թէ զինք սիրել անկարելի է իրեն, հապա նաեւ խոստովանած է թէ իր սէրը և սիրտը ուրիշի կը պատկանի, և ցաւալին այն է որ ան իւր ըսածն ալ գործնական և դատապարտելի կերպով մը հաստատած է: Իսկ ամուսինը այլևս համբերել չը կրնար լուսանկարութեան պահանջը կրնէ: Ժողովը այսդիտի ընթացք մը կը դատապարտէ և չը կրնար քաշալերել այսպիսի ամուսնական կեանք մը չարունակել: Եւ ըստ Աւետարանի վարդապետութեան ամուսնութեան կապը լուծելու պահանջը արդարացի կը գտնէ: Բայց և այնպէս ամուսնութիւնը լուծելու խնդիրը առ այժմ կը յետաձգէ և կաշխատի երկուքն

զբոլուելի մնաց ու պատասխանեց. «Կը սպանեմ ինքզինքս... բայց չեմ հրաժարիլ նպատակէս...»

— Ինչ էր նպատակը, ընդհանրեց Աւագակապետը՝ բոլորովին չը հասկընալ ձեւացնելով:

— Իր արինը մտնող բաշայէն վրէժ լուծել... հաւ բոլորի:

— Իր արինը մտնող բաշայէն վրէժ լուծել. բացառանքից Աւագակապետը սարսուղի ձեւակերպութիւն մը ընելով:

— Այո՛:

— Տարօրինակ գաղափար... պիտի կրնայ յաջողիլ:

— Պիտի կրնայ յաջողիլ, եթէ վրէժ խնդիր ձեռք մըն ալ իրեն օգնութեան հասնի:

— Ուսկի՞ց պիտի հասնի այդ վրէժ խնդիր ձեռքը:

— Է՛հ, այդ ալ պատրաստ է...

— Չեմ հասկնար...

— Ահա այդ վրէժ խնդիր ձեռքը...

— Դո՛ւք:

ալ անցեալը մոռցնել տալով անց մէջ սէր և խաղաղութիւն հաստատել համազելով և խրատելով և այլն:

Բայց առաջ որ Լուսիան յամառեր է չի սէրը ու սիրտը ուրիշի պատկանեցնուն մէջ, և վերջապէս այս ուրիշը բարոյական օգնութեամբ (?) զանի փոխանակ իր էրկանը մօտեցնելու մինչև Ամերիկա հեռացուցեր է:

Այսպէս, երբ փաստերը խօսին խաղախները պէտք է լուեն և ամչնան:

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ

Ընթերցարանիս տարեկան Ընդ. Ժողովը տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի Փետրուար 11ին կէս օրէ վերջ ժամը 2ին Սաէտինէնիէի սրահին մէջ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. Հաշուեալութիւն ներկայ վարչութեան:

Բ. Խորհրդակցութիւն կանոնադրի մասին:

Գ. Ընտրութիւն նոր վարչութեան: Վարչութիւնս կը հրաւիրէ ընթերցարանի բոլոր անդամները անպատճառ ներկայ գտնուիլ:

Ի դիմաց Հայկ. Ընթ. Վարչ. Ատենադպր. Ատենապետ Ա. ՍԻՆԵՄԵԱՆ Ա. ԳԱՍԱՊԵԱՆ

ԾՈՒԹԻ ԳԻՐՔԵՐ

ԹԻՒՊՈՒՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր. Բ. » (483 էջ) 2 ֆր. ՆՈՒ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆԶ ՀԱՅԿԱԿԱՆ երկրորդ անգամ տպագրուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկարներու նիստ ու կալը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատութեանն առաջ. Գին 50 անգրիմ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՒՅՐ Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն: Զեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմել Վ.Ս.ՆԱ «Իրաւունք» ի խմբագրութեան

— Այո՛, ես:
— Զիւր տիրոջ կեանքին դէմ:
— Բայց անկա իմ տէրս չի:
— Ինչպէ՛ս... փաշան քու տէրդ չէ՛:

— Ընդհակառակը... անկա իմ ընտանիքիս արինը մտնող ու իմ երջանկութիւնս թունաւորող օձի մը զաւակնէ զոր ես կը սնուցանեմ միմիայն անոր սիրտէն՝ վեռլին տնդամի ըլլալով: արինը ծծելու ու այնպէս հողը մտնելու...:

Աւագակապետը տփուկեցաւ: Իր կերպարանքին վրայ իջին ու սարսուղի ոտուեր մը պատեցաւ՝ արտա կարգ նայո անքով մը՝ ծերունիի երեսը նայեցաւ...

Կարծես թէ իրեն համար ցնորուած մէկն էր այդ խօսողը: Խոստովանութիւնը՝ զոր լսեց ու հասկցաւ՝ երկիւղալի ու զարհուրելի հանգամանք մը ունէր: Երբէ՛ք, երբէ՛ք չէր սպասեր ատանկ ինկած մարդէ մը՝ ատանկ խորհրդաւոր անձնութիւն մը: Որչափ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Գաւառային առաջնորդարանէ մը գրուած է պատրիարքարան թէ 140ի չափ բնտանիքներ գտնանալու կըլլան: Խառն ժողովը որոշած է կարեւոր տնօրինել:

— Շումայի եկեղեցւոյն մէջ Օրմանեան պատրիարքի սօր մահուանը տարեդարձին առթիւ հագնաւ գիստ կատարուիլ է:

— Մարաշի առաջնորդ բնտրուել է Տ. Կորին վրդ. Եսայեան:

— Կիլիկիոյ Կաթողիկոսը մօտերս հովուական այցելութեան պիտի ելլէ ի թեմերը:

— Հայ-Հռովմէականաց պատրիարք Տ. Պողոս Ս. Սապազեանի քարանախութեան յանձնարար յորդանանի կատարել կը պատրաստուին: Կարգադիր Յաննանուս մը ընտրուած է: Այդ առթիւ դրամական նուիրատուութիւններու գումարը Բանկալթի Ս. Յակոբայ Անկելանցին պիտի յատկացուի:

ՆԵՐԿԻ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ ՌՈՒՍՉՈՒՔ

Ժամանակէ մը ի վեր հաստատուած այս ներկի գործարանը կը ներկէ տան տեսակ եւ գոյներով բամպակեղէն եւ բրդեղէն ապրանքներ: Հագուստներ ալ կը մաքրէ ու կը ներկէ յաճախորդին ուզած գոյնին յար եւ նըմանը: Եւ մասնաւորապէս մանած ներկելու համար բնթարձակ յանձնարարութիւններ կը ստանձնէ. չափազանցելով Անգլիական ինտիկօ (չիլիո) յար եւ նման ըլլալու պայմանաւ:

Ինչպէս Ռուսլուքի նոյնպէս ալ Վառնայի, Ֆիրպէի եւ ուրիշ տեղերու վաճառականներ թող հաճին անգամ մը դիմել մեզ եւ փորձով հաստատել թէ անայլալ եւ մաքուր գոյներով կը ներկենք եւ յանձնարարութիւններ փութով կը գործադրենք:

Դիմել այս հասցէին
Տ. Ղուկաս Օգանեան
ուրիշ փապոյիցնա նւ.14
Ռ Ր Ա Ռ Ո Ւ Ն Ի

որ համակրած էր անոր անձին, անոր նկարագրին ու անոր բարեմիտ բնաւորութեան, ատկա միայն պարզ մտերմութենէ մը առաջ եկած էր, որուն պէտք ունէր՝ իր նպատակին հասնելու համար: Ուրիշ... ոչինչ: Բայց հաւ երեսոյթ մը կը բացուեր... հազար անգունդ մը կերեւար, որուն խորութիւնը թանձր ստուերի մը մէջ կը մնար: Ինքը մօտեցած էր՝ այդ անգունդին, ո՛չ թէ տառապելով, այլ բաղդին բերմամբ: Անկեղծ տեսակցութիւն մը մտերմութեան փոխուած էր եւ մտերմութեան ալ կատարեալ անձնութիւն: Եւ այս էր ամենը. հետեւաբար ապշած վրձակի մը մէջ մնաց ու չկրցաւ ունէ չարամտութեան մը եւ կամ դաւաղութեան մը հետեւանք նկատել Ֆուստ պէյի յայտնա տրամադրութիւնը...

(Շարունակելի)

Д. Тодоровъ и С-но — Варна